


**ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ՀԱՏԿԱՆԻՇԻ ԲԱՐՈՅԱԽՐԱՏԱԿԱՆ ԻՄԱՍՏԻ
ԿԱՌՈՒՅՑԸ ԱՌԱՇՆԵՐՈՒՄ**

ABSTRACT

ANIMAL IMAGERY AND THE STRUCTURE OF DIDACTIC AND MORAL MEANING OF HUMAN TRAITS IN PROVERBS

The present article aims to analyze the linguocognitive representation of human traits in French and Armenian proverbs with a zoonym component from the perspective of conceptual metaphor theory. In proverbial discourse, animals serve as a prism for observing human traits such as dignity, incompetence, gratitude, ingratitude, restraint, greed, cautiousness, and stubbornness. The analysis demonstrates that conceptual metaphors foreground the interrelationship between character traits and patterns of behavior. Using a comparative method, the study reveals both similarities and differences in the linguocultural and linguocognitive features of traits attributed to animals in the proverbial discourse of the linguocultures under consideration. In the context of causality, animal behavior functions as a means of explicating human traits. Within the metaphorical representation of positive and negative connotations the animal is viewed either as a moral benchmark or as a means of modeling vicious behavior.

* e-mail: nare.shalunts@ysu.am



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 09/06/2026

Revised: 19/06/2026

Accepted: 30/06/2026

© The Author(s) 2026

Key Words: proverb, zoonym, human trait, conceptual metaphor, causality.

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածի նպատակը կենդանուն բաղադրիչ պարունակող ֆրանսերեն ու հայերեն առածներում մարդկային հատկանիշի լեզվաճանաչողության վերհանումն է հասկացության փոխաբերության դիտանկյունից: Առածային խոսույթում կենդանիների պրիզմայով դիտարկվում են մարդկային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են արժանավորությունը, ապաշնորհությունը, երախտագիտությունը, երախտամոռությունը, զսպվածությունը, ազահությունը, զգուշությունն ու համառությունը: Վերլուծությունից պարզ է դառնում, որ հասկացության փոխաբերություններն ընդգծում են հատկանիշի ու վարքագծի փոխառնչությունը: Համեմատական մեթոդի օգնությամբ վերհանվում են քննության առարկա լեզվամշակույթների առածային խոսույթում կենդանիներին վերագրվող հատկանիշների լեզվամշակության ու լեզվաճանաչողական առանձնահատկությունները: Պատճառահետևանքայնության համատեքստում կենդանու վարքագիծը հանդես է գալիս իբրև մարդկային հատկանիշի բացորոշման միջոց: Դրական ու բացասական հարանշանակության փոխաբերական պատկերման շրջանակում մի դեպքում կենդանին դիտարկվում է իբրև բարոյական չափանիշ, մյուս պարագայում՝ արատավոր վարքագծի կաղապարման միջոց:

Բանալի բառեր՝ առած, կենդանուն, մարդկային հատկանիշ, հասկացության փոխաբերություն, պատճառահետևանքայնություն:

РЕЗЮМЕ

ОБРАЗ ЖИВОТНОГО МИРА И ФОРМИРОВАНИЕ ДИДАКТИЧЕСКОГО И МОРАЛЬНОГО СМЫСЛА ЧЕЛОВЕЧЕСКОЙ ХАРАКТЕРИСТИКИ В ПОСЛОВИЦАХ

Данная статья посвящена анализу лингвокогнитивной репрезентации человеческого характера во французских и армянских пословицах с компонентом-зоонимом в рамках теории

концептуальной метафоры. В пословичном дискурсе образы животных выступают призмой интерпретации таких человеческих характеристик, как достоинство, некомпетентность, благодарность и неблагодарность, сдержанность, жадность, осторожность и упрямство. Проведенный анализ демонстрирует, что концептуальные метафоры акцентируют взаимосвязь между чертами характера и моделями поведения. С помощью сравнительного метода анализа в исследовании выявляются как сходства, так и различия в лингвокультурных и лингвокогнитивных особенностях характеристик, приписываемых животным в пословичном дискурсе рассматриваемых лингвокультур. В контексте каузальности поведение животных служит средством экспликации человеческих характеристик. В рамках метафорической репрезентации положительных и отрицательных коннотаций животное рассматривается либо как этический эталон, либо как средство моделирования порочного поведения.

Ключевые слова: пословица, зооним, человеческая характеристика, концептуальная метафора, каузальность.

Առածային խոսույթի փոխաբերական պատկերի համատեքստում հաճախ կենդանիներին վերագրվում են այնպիսի հատկանիշներ, որոնք բնորոշ են մարդուն: Տվյալ դեպքում մարդակենտրոն հայեցակերպի օգնությամբ վերհանվում են կենդանական աշխարհի ներկայացուցիչներին բնութագրող հատկանիշների էությունը: Մասնավորապես՝ Լակոնֆի և Թըրնըրի առաջադրած Գոյի մեծ շղթայի փոխաբերության տեսության հիման վրա գոյության ձևերի աստիճանակարգումը ենթադրում է կենդանի էակներից մինչև անկենդան առարկաներ անցումը՝ ընդգրկելով մարդ-կենդանի-բույս-առարկա շղթան: Այս համատեքստում կենդանիներին վերագրվող մարդկային հատկանիշների բնույթը (խոզ՝ կեղտոտ, փնթի, անտաշ, առյուծ՝ քաջ, մեծահոգի, աղվես՝ խելացի, շուն՝

հավատարիմ, վստահելի, կատու՝ անվստահելի, փոփոխական, անկախ, գայլ՝ դաժան, արյունարբու և այլն) դիտարկվում է ՄԱՐԴԻԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ հասկացության փոխաբերության միջոցով (Lakoff & Turner, 1989, p.193-194): Ըստ Կովեչեսի՝ մարդկային հատկանիշները նախ վերագրվել են կենդանիներին, այնուհետև կրկին բնորոշել մարդուն (Kövecses, 2002, p.125): Գիտական հարացույցում մի շարք հետազոտողներ քննության են առել առածային խոսույթում կենդանուն հասկացույթի լեզվաճանաչողական, լեզվագործաբանական ու լեզվամշակութային առանձնահատկությունները (Babič, 2024, Lauhakangas, 2019, Mieder, 1993, Nuessel, 2010, Алексеева, 2025): Հատկանշական է, որ կենդանին կարող է դիտարկվել և՛ որպես վարքագծի օրինակելի կաղապար, և՛ որպես քննադատության օբյեկտ (Leguy, 2012, p.2-4):

Կենդանական աշխարհը մեխանիզմ է՝ մարդկայինի հասարակական ու մշակութային էությունը պարզորոշելու համար: Սույն հետազոտության շրջանակում հասկացության փոխաբերության տեսանկյունից քննության են առնվում ֆրանսերեն ու հայերեն առածաբանական հեղինակավոր բառարաններից քաղված՝ մարդկային հատկանիշ արտահայտող այնպիսի առածներ, որոնք ներառում են կենդանուն բաղադրիչ:

Մարդկային հատկանիշի լեզվաճանաչողությունը կենդանուն հասկացույթի միջոցով

Առածային խոսույթը շեշտադրում է կենդանու վարքագծի գնահատողական բնույթը՝ մարդկային դաշտ փոխադրման արդյունքում: Նախ հարկ ենք համարում կենդանու փոխաբերական պատկերի օգնությամբ դիտարկել արժանավորության ու ապաշնորհության լեզվաճանաչողությունը մարդկային արժանիքի շեշտադրման դիտանկյունից: Այս համատեքստում ներքոնշյալ առածների լեզվաճանաչողությունը հիմնված է ԱՐԺԱՆԻՔԸ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔ Է հասկացության փոխաբերության վրա:

Une abeille vaut mieux que mille mouches

Il n'y eut jamais peau de lion à bon marché

À renard endormi ne vient bien ni profit

L'aigle ne chasse point aux mouches

Մարդ կա, մարդ ա, մարդ էլ կա, էշից վատ ա

Մարդ կա, աշխարհք արժե, մարդ էլ կա, էշ էլ չարժե

Ձի չեղած տեղը էշն էլ մեծ գին ունի

Առյուծ չեղած ժամանակ աղվեսն էլ մեծ գազան է

Քննության առարկա առածներում կենդանիները դիտարկվում են նյութական արժեքի պրիզմայով: Հատկանշական է այն հանգամանքը, որ տեղի է ունենում նյութական արժեքի փոխադրում բարոյական տիրույթ. արժեքն առնչվում է ոչ միայն շուկայական ոլորտին, այլև բարոյական-արժեհամակարգային տիրույթին՝ արժանավոր բնույթի ընդգծմամբ: Արժեքի լեզվական առկայացումն առածներում իրականանում է *vaut mieux que, à bon marché, ne vient bien, ni profit, ne chasse point aux mouches, էշից վատ ա, աշխարհք*

արժե էշ էլ չարժե, մեծ գին ունի, աղվեսն էլ մեծ գազան է լեզվական կառույցների օգնությամբ: Ֆրանսերեն առածներն ընդգծում են մեղվի աշխատասիրությունը, առյուծի ուժը, արծվի արժանապատվությունը, քննադատում աղվեսի ծուլությունը, մինչդեռ հայերեն առածներում էշ հասկացույթը մտազուգորդվում է ապաշնորհության ու անարժանության հետ, իսկ վերջինիս, ինչպես նաև աղվեսի արժեքը որոշարկվում է համապատասխանաբար ձիու և առյուծի բացակայության պայմաններում:

Վերոնշյալ բոլոր առածներում հատկանիշը ներակա է, կենդանին վարքագիծ չի դրսևորում՝ բացառությամբ *À renard endormi ne vient bien ni profit* և *L'aigle ne chasse point aux mouches* առածների: Մասնավորապես՝ *endormi* (քնած) բնորոշիչը ճանաչողության միջոցով առաջ է բերում աղվեսի վարքագծային կաղապարի դիտարկում: Քունը ենթադրում է որսի, շարժման ու գործողության բացակայություն, ուստի ծուլությունն ու անգործությունը նույնիսկ հնարամիտ մարդու պարագայում հանգեցնում են ձախողման: Ինչ վերաբերում է արծվի վարքագծին, վերջինս չի զբաղվում մանրուքներով՝ «ճանճ չի որսում», քանի որ դա նրա արժանապատվությունից ցածր է, իսկ *chasser* բայի կիրառումը կրկին ուղղորդում է որսի տիրույթ: Հատկանշական է, որ առածում կենդանին դառնում է սոցիալական ու բարոյական աստիճանակարգման խորհրդանիշ, և այս համատեքստում արծիվ-ճանճ հակադրությունը վեհություն-ոչնչություն հասկացութային բախման մասին է:

Կենդանիների աստիճանակարգման համատեքստը բացորոշում է մարդկային տիրույթում բարոյական ու սոցիալական աստիճանակարգման հայեցակերպը, որը ֆրանսերենում առկայանում է մեղու-ճանճ, արծիվ-ճանճ, իսկ հայերենում ձի-էշ, առյուծ-աղվես բաղդատման օգնությամբ: Հարկ է ընդգծել, որ ֆրանսերենում արժանավորության արտահայտումը կաղապարվում է քանակի ու որակի հարաբերակցության տիրույթում՝ 1 abeille > 1000 mouches: Այլ կերպ ասած՝ քանակը չի կարող շղարշել որակը: Արժանավորության ու անարժանության հակադրամիասնության իմաստային դաշտը հայերենում առկայանում է շարահյուսական գուգահեռության միջոցով (մարդ կա ..., մարդ էլ կա ...): Մի դեպքում մարդ-էշից վատ մարդ, մյուսում՝ աշխարհք արժեցող մարդ-էշ չարժեցող մարդ բնութագրումները ներկայացնում են արժեքի բարոյական ուղղվածությունը: Հատկանշական է, որ այս պարագայում գոյության ձևերի աստիճանակարգման համատեքստում կենդանին առավել բարձր դիրք է զբաղեցնում, քան մարդը: Առածները քննադատում են մարդու ապաշնորհությունը՝ էշի հետ համեմատության շրջանակում ապաշնորհ մարդուն ներկայացնելով իբրև ավելի ցածր արժեքների կրող: Իրական արժեքի, արժանավոր մարդու բացակայությունը (ձի չեղած տեղը, առյուծ չեղած ժամանակ) ստեղծում է թվացյալ, կեղծ աստիճանակարգման արժևորում՝ շեշտադրելով արժեքի հարաբերական բնույթը, ընդ որում՝ առածներում տեղի և ժամանակի առնչության քննությունն ուղղորդում է ԺԱՄԱՆԱԿԸ

ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ Է հասկացության փոխաբերության դաշտ՝ նկատի առնելով այն, որ ձի չեղած տեղը ճանաչողական մակարդակում ենթադրում է ձի չեղած ժամանակ կառույցի առկայացում:

Այժմ մարդկային արժանավորության ու ապաշնորհության լեզվաճանաչողությունը դիտարկենք հարաբերությունների տիրույթում ներքին էությանը հավատարիմ վարքագծի և ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԸ ԲՆԱԶԴԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾ Է հասկացության փոխաբերության շրջանակում:

Un bon renard ne mange jamais les poules de son voisin

Quand le renard prêche, veillez sur vos oies

Jamais bon chien n'aboie à faux

Վերոնշյալ առածները կենդանական աշխարհի պատկերի օգնությամբ բնորոշում են հասարակական հարաբերությունների իմաստային շրջանակը, ինչը լեզվական մակարդակում դրսևորվում է les poules de son voisin, quand le renard prêche, n'aboie à faux արտահայտությունների միջոցով: Քննության առարկա բոլոր առածներում կենդանիները գործող անձինք են, որոնց վարքագիծը բացորոշում է մարդկային հատկանիշի լեզվաճանաչողությունը: Այս համատեքստում առածներն ընդգծում են շան հավատարմությունը, իսկ աղվեսը հակադիր իմաստային նրբերանգների կրող է: Մի դեպքում այն բնութագրում է հասարակական համակեցության նկատմամբ հարգանքը, մյուսում՝ կեղծավորությունը: Հարկ է ընդգծել, որ աղվեսը միշտ աղվես է՝ խորամանկ, իսկ վարքագծի

փոփոխությունը բացորոշում է ոչ թե էության փոփոխությունը, այլ կոնկրետ համատեքստում նրա մարտավարությունը: Մասնավորապես՝ հատկանիշի վերհանման արտակա հայեցակերպն առկա է bon renard և bon chien լեզվական կառույցներում, և տվյալ դեպքում bon ածականը միջոց է՝ որոշարկելու վարքագծի կաղապարը: Un bon renard ne mange jamais les poules de son voisin առածում աղվեսը հասարակական զգուշավորության վարքագիծ է դրսևորում՝ էությունը ներդաշնակելով հասարակական միջավայրին: Տարածական սահմանագծման տիրություն վերջինս հարգում է հարևանի իրավունքը, ինչն էթիկական դիտանկյունից օրինակելի վարքի ցուցիչ է: Այլ կերպ ասած՝ խորամանկության հակված մարդն այնքան խորամիտ է, որ կարողանում է ի ցույց դնել իր արտաքին բարեպաշտությունը՝ վտանգից խուսափելու շահադիտական նպատակով: Մինչդեռ մյուս առածում աղվեսը քարոզում է (le renard préche), խրատ է կարդում, ինչը ճանաչողական դիտանկյունից աղերսվում է ներքինի ու արտաքինի անհամապատասխանությանը, քանի որ քարոզը հակադրվում է աղվեսի էությանը, ուստի վերհանում է բարոյական շղարշի տակ թաքնված գիշատչական մտադրությունները՝ բնորոշելով մարդկային կեղծավորությունը: Տվյալ պարագայում կեղծավոր մարդու «քարոզը» դիտարկվում է ունկնդրի համար թակարդի պրիզմայով: Ճանաչողական-գործաբանական դիտանկյունից առածը զգուշության հորդոր է հղում՝ veillez sur vos oies: Նշյալ առածը շեշտադրում է ժամանակային

հայեցակերպը (quand): Ինչ վերաբերում է շուն հասկացույթի փոխաբերական պատկերմանը, այն *Jamais bon chien n'aboie à faux* առածում մտազուգորդվում է վստահելիության ու հավատարմության հետ, ինչի լեզվական դրսևորումը *bon* ածականի կիրառությունն է, որին հետևում է վարքագծի կաղապար՝ *n'aboie à faux*, ընդ որում՝ ժամանակային բացարձակ շեշտադրմամբ: Այլ կերպ ասած՝ ներքինի ու արտաքինի համապատասխանության շրջանակում վստահելի մարդը երբեք չի մոլորեցնում, իսկ խոսքն ունի հիմք ու կշիռ:

Մարդկային ապաշնորհության լեզվաճանաչողական կաղապարում ներքոնշյալ առածների պարագայում դիտարկել ենք ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ Է հասկացութային փոխաբերության միջոցով, և բարոյական տիրույթից ցանկացած շեղում համարվում է աղտ.

Brebis galeuse gâte le troupeau

À laver la tête d'un âne on perd sa lessive

Խոզի գլուխը խալիչի վրա չի կենալ

Քոսոտ կովը նախրի անունը կավիրե (կխայտառակի)

Մեկ մուկը յոթը կարաս կմուռտառե (կապականի)

Ֆրանսերեն առածներում ապաշնորհությունը դրսևորվում է ոչխար, էջ, իսկ հայերենում՝ խոզ, կով, մուկ հասկացույթների միջոցով: Աղտոտման լեզվական հայեցակերպն առկայանում է *brebis galeuse*, à *laver la tête d'un âne*, խոզի գլուխը, քոսոտ կովը, կմուռտառե արտահայտությունների օգնությամբ: Անարժան ու ապաշնորհ

մարդու կերպարը լեզվական մակարդակում դիտարկվում է *brebis galeuse* արտահայտության միջոցով, որում *galeux* ածականի կիրառությունը բացասական հարանշանակային իմաստի դրսևորում է, ինչին հայերեն առածային խոսույթում իբրև համարժեք կարելի է դիտարկել քոսոտ կովի կերպարը: Առաձներում հասարակական աղոտման դիտանկյունը հարկ է քննել *brebis-troupeau*, կով-նախիր, մեկ մուկ-յոթ կարաս հակադրությունների դիրքերից՝ նկատի առնելով բացասական անհատի «վարակիչ» ազդեցությունը հանրույթի վրա: Նշյալ դատողությունը պատճառահետևանքայնության դիտանկյունից աղերսվում է փոքր պատճառ-մեծ հետևանք շղթային: Ֆրանսերեն առածն ընդգծում է էշի ապաշնորհությունը հիմարության դիտանկյունից: Տվյալ դեպքում հիմարությունը արտաքին խրատի ազդեցությամբ «չի մաքրվում», իսկ արդյունքը լվացքի միջոցի՝ խրատի վատնումն է: Հայերեն առածում խոզի և խալիչեի համադրումը ճանաչողական դիտանկյունից առաջ է բերում անհամատեղելիություն՝ հիմք ընդունելով խոզի կեղտոտությունը և խալիչեի բարձրարժեքությունը, ինչն էլ հանգեցնում է անարժան մարդու կերպարի բացահայտմանը, արտաքին միջամտությամբ վերջինիս էության փոփոխության անհնարինությունը:

Ներքոնշյալ առածների պատճառահետևանքայնության կաղապարի շրջանակում ապաշնորհության հիմքում անտեղյակությունն է, իսկ ԻՄՄՅՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ է.

Էշն ի՞նչ գիտի՝ նուշն ինչ է

Էշն ինքն է, խոտն ուրիշի առաջ կդնե

Էշի/ուղտի ականջում քնած է

Առածների լեզվաճանաչողությունը հիմնված է էշի և ուղտի հիմարության վրա, ինչն առկայանում էշն ի՞նչ գիտի, էշն ինքն է, ականջում քնած է լեզվական կառույցների օգնությամբ: Ընկալունակության կաղապարն առկայանում է համապատասխանաբար ճաշակելու, տեսնելու և լսելու զգայական ճանաչողության օգնությամբ: Այս համատեքստում էշ հասկացույթը մտազուգորդվում է մտավոր ու հասարակական գիտակցության, ընկալունակության բացակայություն հետ: Հատկանշական է էշն ի՞նչ գիտի՝ նուշն ինչ է առածի վերլուծությունը շարահյուսական մակարդակում: Նախ առածի փոխաբերականության հիմքում էշի իմացության ու համի ճանաչողության պատկերն է: Էշը մարմնավորում է այն մարդուն, որը զուրկ է բարձրագույն ընկալունակությունից՝ գեղագիտական, հոգևոր, մտավոր: Ինչպես կենդանու համար նուշը որևէ արժեք չի ներկայացնում, այնպես էլ տգետ մարդն անհաղորդ է բարձրարժեք գաղափարին: Առածի երկբաղադրիչ կառույցի առաջին մասը՝ էշն ի՞նչ գիտի, ենթադրում է հոետորական հարց: Հարցական բնույթի ասույթը տվյալ դեպքում ներակա կերպով արտահայտում է ժխտում՝ էշը չգիտի. էշն ու իմացությունը փոխադարձաբար բացառում են միմյանց: Ավելին, էշ և նուշ նմանահունչ հասկացությունների մեկտեղումը ճանաչողական դիտանկյունից առաջ է բերում անհամապատասխանություն, քանի որ նուշն առկա չէ էշի ընկալման մակարդակում, չկա գնահատելու

ունակություն, ուստի իմացության ներակա ժխտման միջոցով (ի՞նչ գիտի՝ չգիտի) նուշի՝ բարձրագույն արժեքի կշիռը մնում է անհայտ: Իբրև ճանաչողական–գործաբանական քննության առարկա՝ առածը տգիտության քննադատություն է և անընկալունակ անձին վեհ արժեքներ չմատուցելու խորհուրդ: Էշն ինքն է, խոտն ուրիշի առաջ կդնե առածի առաջին բաղադրիչ ասույթը ենթադրում է սուբյեկտի նույնացում կենդանու հետ, և այս պարագայում դերանունը բնորոշում է հենց սուբյեկտին: Ինչ վերաբերում է երկրորդ բաղադրիչին, այն ցուցանում է վարքագծի կաղապարի միջոցով հայելային արտապատկերում և սեփական բնույթին անտեղյակություն. էշը փորձում է սեփական բնույթը «փոխանցել» ուրիշին, ուստի խոտը դառնում է ինքնության ցուցիչ: Հատկանշական է առածի փոխաբերական պատկերի վերլուծությունը ես-ի և ուրիշ-ի հարաբերության համատեքստում: Այս պարագայում էշը բնութագրում է սոցիալական կողմնորոշմանն անհաղորդ, սեփական շահը ուրիշի շահից չտարբերող մարդուն: Ի հակադրություն վերը դիտարկված առածի, որում նուշն առնչվում է ճանաչողության բարձր մակարդակին, ճշակին, քննության առարկա առածում խոտը ցածր բնույթի մասին է: Քննության առարկա մյուս առածում քնած հարակատար դերբայի կիրառումը գործողության ընթացքը վերածում է կայուն վիճակի, իսկ քունը ենթադրում է արտաքին ազդակին արձագանքման, ընկալման բացակայություն: Տարածական հայեցակերպի շրջանակում քունը էշի/ուղտի ականջում առավել ընդգծում է ակընկալունակության հանգամանքը՝ հաշվի առնելով

այն, որ ականջը հաղորդակցման, ընկալման միջոցն է, իսկ ականջում քնած լինելը ենթադրում է տեղեկության արգելափակում:

Երախտագիտության ու երախտամոռության հակադիր իմաստային դաշտերի լեզվաճանաչողական քննության մեկնակետը երախտիքի ընկալումն է: Տվյալ պարագայում վերջինիս արձագանքը կարող է ընթանալ երկու ուղղությամբ. մի դեպքում այն կարող է համարժեք լինել բարի գործին, ինչն ուղղորդում է երախտագիտության տիրույթ, մյուսում բարի գործը կարող է ստանալ անհամարժեք պատասխան՝ մատնանշելով երախտամոռություն: Այսպիսով, ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՁԱԳԱՆՔ Է, ԵՐԱԽՏԱՄՈՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՁԱԳԱՆՔ Է հասկացության փոխաբերությունների համատեքստում դիտարկենք հետևյալ առաձևերը, որոնք հիմնված են ԵՐԱԽՏԻՔԸ ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ Է հասկացության փոխաբերության վրա:

Plus vous caressez le chat, plus il fera le gros dos

Chantez à l'âne, il vous fera des pets

Լեզվամշակության առանձնահատկությունների լույսի ներքո առաձևերը վերհանում են կենդանական աշխարհի բազմապիսի գունապնակ, և քննության առարկա առաձևերում կենդանին ուղղակիորեն մատնանշում է երախտամոռ մարդուն: Մասնավորապես՝ առաձևերը շեշտադրում են կատվի ու էջի երախտամոռությունը պատճառահետևանքայնության շրջանակում: Ընդ որում՝ բացակայում է ածականի միջոցով արտահայտված հատկանիշի բնութագրումը, և երախտամոռությունն առկայանում է

առածների երկրորդ բաղադրիչի լեզվական կառույցի միջոցով՝ plus il fera le gros dos, il vous fera des pets, ինչը կենդանու բնագրային վարքագծի դրսևորում է: Առածների առաջին բաղադրիչը՝ պատճառը, բարիքի արտահայտությունն է, որն առկայանում է զգայական ճանաչողության պրիզմայով՝ շոյելու և երգելու, համապատասխանաբար շոշափելիքի ու լսողական ընկալման միջոցով (plus vous caressez le chat, chantez à l'âne): Արտաքին ազդեցությանը, բարիքին պատասխանը՝ հետևանքը, երախտամոռ վարքագծի ցուցադրումն է, կենդանու բնագրային գործողությունը. փոխադարձության կաղապարը ձախողում է, կենդանու բնությունը հաղթում է: Լեզվական մակարդակում պատճառն առկայանում է հրամայական եղանակի բայաձևի (chantez) միջոցով, իսկ պատճառի ու հետևանքի կապը ոճական դիտանկյունից դիտարկվում է շարահյուսական գուգահեռության (plus ..., plus ...) միջոցով, սակայն բարիք գործելը չի փոխում երախտամոռ մարդու բնույթը: Հարկ է նշել, որ առածները լայն իմաստով առնչվում են հաղորդակցության կաղապարի ձախողմանը՝ հիմք ընդունելով այն իրողությունը, որ հասցեատերը չի տիրապետում հաղորդագրությունն ուղարկողի լեզվին՝ բարիքին:

Մարդկային հատկանիշի արտահայտման լեզվաճանաչողական կաղապարի քննության շրջանակում դիտարկել ենք նաև բարիքի՝ իբրև կենարար ուժի փոխանցման արդյունքում երախտագետ կամ երախտամոռ վարքագծի վերհանումը ԵՐԱՄՏԻՔԸ ՄՆՈՒՆԴ Է և

ԵՐԱԽՏԻՔԸ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ Է հասկացութային
փոխաբերությունների շրջանակում:

Nourris un corbeau, il te crèvera les yeux/l'œil

Օձը տաքացնողին է կծում

Հավի պես կուտի, կտուցը գետնին կքսի

Հավը ջուր ա խմում, վերև ա մտիկ անում

Պատճառահետևանքայնության համատեքստում բարիքի՝ իբրև պատճառի լեզվական դրսևորման հայեցակերպն առկայանում է սննդի (nourris, կուտե, ջուր ա խմում) և ջերմության (տաքացնողին) միջոցով: Ֆրանսերենում ընդգծվում է ազոավի, իսկ հայերենում՝ օձի երախտամոռությունը: Հատկանշական է հայերենում հավի հակադիր իմաստային ճանաչողական կադապարումը՝ և՛ երախտագետ, և՛ երախտամոռ: Երկբադադրիչ կառույցի օգնությամբ ֆիզիոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված սովորական վարքը՝ ջուր խմել և վերև մտիկ անել, ուտել և կտուցը գետնին քսել, առածներում վերացարկման տիրույթում վերևի ու ներքևի հակադրության շրջանակում փոխադրվում է էթիկայի դաշտ՝ դառնալով երախտագետ կամ երախտամոռ մարդու բնութագրում: Վերև մտիկ անելով՝ նույնիսկ հավն է շնորհակալ լինում Աստծուն, ուստի առածը ներակա քննադատում է նրանց՝ այն բանական մարդկանց, որոնք հակառակ վարքագծային կադապար են ցուցադրում: Ընդ որում՝ երախտագիտության արտահայտման պարագայում հավը լեզվական քննության մակարդակում ենթակա է սուբյեկտայնացման դիրքերից, մինչդեռ երախտամոռության

դեպքում համեմատություն ոճական հնարի միջոցով ընդգծվում է նմանության կերպը՝ հավի պես: Քննության առարկա բոլոր առածները շեշտադրում են կենդանու վարքագիծը՝ առանց հատկանիշի բացահայտ շեշտադրման: Ֆրանսերեն երկբաղադրիչ առածի առաջին ասույթը իբրև պատճառ հրամայական բայաձևի (nourris) լեզվական դրսևորում է, ինչին հետևում է անհամապատասխան արձագանքը՝ այքը ծակելը, որն ուղղորդում է ցավի զգայական ճանաչողության տիրույթ (il te crèvera les yeux/l'œil): Ցավի ճանաչողությունն առկա է նաև հայերեն առածում (տաքացնողին է կծում): Ինչպես ֆրանսերեն նախորդ առածներում, քննության առարկա ֆրանսերեն առածում ևս հատկանշական է նաև հարակրկնության գործածումը (il), ինչը ենթադրում է արտաքին ազդեցության արդյունքում կենդանու՝ իբրև սուբյեկտի վարքագծի լեզվական առկայացման դրսևորումը: Հարկ է ընդգծել հայերեն առածում ենթակայական դերբայի միջոցով պատճառի լեզվական առկայացումը իբրև բարիքի աղբյուր (տաքացնող): Երախտամոռությունը բնութագրելու համար ֆրանսերենում ևս գործածական է օձին տաքացնելու պատկերը, սովյալ դեպքում՝ դարձվածքի միջոցով (réchauffer un serpent dans son sein): Այսպիսով, երախտամոռությունը դիտարկվում է իբրև մարդկային բարոյական արատ, և սովյալ պարագայում բարիքը ոչ թե հանգեցնում է փոխադարձության, այլ սնում է նենգությունը՝ ստեղծելով մի շղթա, որտեղ բարիք գործողը դառնում է իր իսկ բարության զոհը:

Այսպիսով՝ երախտագիտություն ու երախտամոռություն ցուցանող քննության առարկա առաձները վերհանում են կենդանիների լեզվաճանաչողական երկու կաղապար: Մի կողմից կատու, էշ, ագռավ, օձ և հավ (կտուցը գետնին քսող) հասկացույթների առկայացման ու վարքագծի պարագայում մարդկային բարոյական վեհությունը չի հաղթում վերջիններիս գիշատիչ բնույթին, և բարիքին պատասխանը սահմանափակվում է նշյալ կենդանիների բնույթի ու արձագանքի ընդգծմամբ: Մյուս կողմից կենդանին դառնում է բարոյական չափանիշ, ինչն արտացոլվում է հավ (վերև մտիկ անող) հասկացույթի պարագայում: Այս համատեքստում կենդանին գոյության ձևերի աստիճանակարգման տիրույթում բարձր է ապերախտ մարդուց: Ըստ շղթայի՝ հավը ցածրադաս է, սակայն վերջինիս վարքագիծը երախտամոռ մարդու հետ համեմատության դիրքերից աստիճանային առավել բարձր տիրույթում է:

Այժմ դիտարկենք առաձներում զսպվածության ու ազահության հակադրության լեզվաճանաչողական կաղապարը կենդանիների բնորոշման ու ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՍ է հասկացութային փոխաբերության առկայացման դիտանկյունից.

Il ne faut pas courir deux lièvres à la fois

Qui court deux lièvres n'en prend point

Երկու նապաստակի ետևից վազողը մեկն էլ չի բռնի

Վերոնշյալ առաձները հիմնված են որս հասկացույթի փոխաբերական պատկերման վրա, ինչը ենթադրում է վազք, շարժում տարածության մեջ (courir deux lièvres à la fois, qui court deux lièvres,

երկու նապաստակի ետևից վազողը): Ազահության քննադատության ու զսպվածության հորդորի դիտանկյունից կենդանին հանդես է գալիս իբրև միջոց, օբյեկտ հատկանիշի բացորոշման նպատակով սուբյեկտի վարքագծի ներկայացման համար: Տվյալ պարագայում կենդանուն որևէ հատկանիշ չի վերագրվում. այն սոսկ միջոց է՝ մարդու ազահությունը բացորոշելու համար: Այլ կերպ ասած՝ առաձներում գործող անձը մարդն է: Հատկանշական է, որ երկու լեզվամշակույթներում առաձները հիմնված են նույն պատկերի վրա՝ վազել երկու նապաստակի ետևից: Որսի պատկերի տիրույթում նապաստակը դիտարկվում է իբրև նպատակ, իսկ վազքը՝ ժամանակն ու ջանքը, որը ներդրվում է նպատակին հասնելու համար, ենթադրում է տարածական ուղղվածություն: Միաժամանակ երկու ուղղությամբ վազելու անհնարինությունն արտապատկերվում է նպատակին հասնելու տիրույթի վրա և թվային հակադրության միջոցով առկայանում է արդյունքի բացարձակ ժխտումը (n'en prend point, մեկն էլ չի բռնի): Ֆրանսերեն առաջին առաձը լեզվական մակարդակում ժխտման միջոցով հորդորում է միաժամանակ չվազել երկու նապաստակի ետևից, մինչդեռ երկրորդ առաձը երկբաղադրիչ կառուցվածքի օգնությամբ պատճառահետևանքայնության համատեքստում վերհանում է հորդորի իմաստային կառույցը՝ շեշտադրելով հետևանքը: Մասնավորապես՝ երկու նապաստակի ետևից վազելը չի հանգեցնում որևէ արդյունքի: Լեզվաճանաչողական կադապարն առկա է նաև հայերեն համարժեքում, սակայն եթե ֆրանսերենում մարդը որոշարկվում է ստորադաս նախադասության

կազմում հարաբերական դերանվան օգնությամբ (qui court deux lièvres), ապա հայերենում մարդկային կերպարն առկայանում է ենթակայական դերբայի միջոցով (վազողը): Այսպիսով, միաժամանակ երկու առաջնահերթությունն սահմանելը՝ ավելին ունենալու պատրանքը, նվազեցնում է իրական արդյունքի հասնելու հնարավորությունը:

Մարդու բնորոշման լեզվաճանաչողական կադապարի քննությունը զգուշության դաշտում դիտարկել ենք փորձառության հետ զուգահեռման շրջանակում ԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՅՅԱԼԻ ՄԽԱԼՆԵՐԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ Է հասկացութային փոխաբերության դիտանկյունից:

Un renard ne se laisse pas prendre deux fois à un piège

Un âne ne trébuche pas deux fois sur la même pierre

Quand un âne va bien, il va sur la glace et se casse une patte

Փորձված աղվեսը երկու ոտքով է թակարդն ընկնում

Ճարպիկ մուկը երկու ոտքով թակարդ կընկնի

Վերոնշյալ բոլոր առածներում կենդանիները գործող անձինք են, ինչը լեզվական մակարդակում առկայանում է ենթակայի միջոցով, և այս համատեքստում ֆրանսերեն առածները շեշտադրում են աղվեսի փորձառությունը, էշի փորձառության ու ինքնավստահության հակադրամիասնությունը, մինչդեռ քննության առարկա հայերեն առածները վերհանում են աղվեսի ու մկան փորձառությունն ու հնարամտությունը: Առածների հիմքում արգելքի փոխաբերական պատկերումն է շարժման տիրույթում (prendre deux fois à un piège, ne

trébuche pas deux fois sur la même pierre, il va sur la glace, թակարդն ընկնում, թակարդ կընկնի): Հետաքրքրական է էջ ու աղվես հասկացությունների համեմատական դիտարկումը. առաջինը և՛ ֆրանսիական, և՛ հայկական լեզվամշակությունում լայն իմաստով մտազուգորդվում է հիմարության, իսկ երկրորդը՝ խորամանկության հետ: Այսպես, Quand un âne va bien, il va sur la glace et se casse une patte առածը բնորոշում է էջի հիմարությունը լեզվական մակարդակում պատճառահետևանքայնության եռաբաղադրիչ սխեմայի միջոցով. չափից ավելի ինքնավստահությունը դժբախտության պատճառ կարող է դառնալ: Բարեկեցությունը (quand un âne va bien) և տարածության մեջ շարժումը (il va sur la glace) լեզվական խաղի միջոցով (aller bien և aller sur la glace) հանգեցնում են սայթաքման ու վնասի (se casse une patte), կամ էշն իր բնույթը չի փոխում:

Ֆրանսերեն առածներում ընդգծվում է էջի, ինչպես նաև աղվեսի փորձառության իրողության հանգամանքը, քանի որ էջը երկրորդ անգամ նույն քարին դեմ առնելիս չի սայթաքում (Un âne ne trébuche pas deux fois sur la même pierre), իսկ աղվեսը երկրորդ անգամ նույն թակարդը չի ընկնում (Un renard ne se laisse pas prendre deux fois à un piège): Միջմշակութային դիտանկյունից աղվես հասկացությամբ ներառող ֆրանսերեն առածի վերլուծությունը հայերենի հետ հակադրության համատեքստում առաջ է բերում հակադիր պատկերներ: Եթե ֆրանսերեն առածում փորձառությունը աղվեսի զգուշության ցուցիչն է, ապա հայերեն տարբերակում նույնիսկ փորձառությունը աղվեսին չի օգնում խուսափել թակարդից:

Նույնական պատկեր առկա է նաև մուկ հասկացույթի պարագայում, քանի որ ճարպկությունը չի փրկում մկանը թակարդից խուսափելուց: Հատկանիշը լեզվական մակարդակում առկայանում է փորձված և ճարպիկ բնորոշիչների միջոցով՝ առավել ընդգծելով կենդանիներին վերագրվող բնութագրումները: Այս համատեքստում նույնիսկ վերաբերականի կիրառությունը որոշարկում է բնութագրիչների էությունը: Նույնիսկ ամենահիմար էակն է դասեր քաղում ֆիզիկական ցավից, ինչը փորձառության նվազագույն շեմի ցուցիչն է: Նույնիսկ ամենահնարամիտ ու փորձված մարդը կարող է սխալվել: Հատկանշական է առածներում *deux fois* և փորձված լեզվական միավորների կիրառումը, ինչը բնորոշում է փորձառությունը, կրկնությունն ու սովորույթի ուժը՝ նկատի առնելով ժամանակային տարրը:

Համառության որոշարկման դաշտում հայերեն առածը բովանդակում է ՀԱՄԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է հասկացութային փոխաբերությունը.

Դու ինչ ուզում ես ասա, նա իր էջն ա քշում

Առածը համառությունը բնորոշում է էջ հասկացույթի օգնությամբ՝ մտազուգորդելով հիմարության հետ: Առածի երկբաղադրիչ կառուցվածքը ենթադրում է երկու պատկեր՝ մեկը խորհուրդ է տալիս, իսկ մյուսն անտեսում է խորհուրդը և շարունակում իր ճանապարհը: Այսպիսով՝ մարդը համառում է կոնկրետ վարքագծի կադապարում՝ չնայած արտաքին օգտակար ազդեցությանը: Դու ինչ ուզում ես ասա բաղադրիչն ընդգծում է համառ մարդուն ուղղորդելու անիմաստ

լինելը երկխոսության շրջանակում. առածը ճանաչողական–գործաբանական տեսանկյունից քննադատում է համառությունը: Տարածական սխեմայի դիտանկյունից վարքագծային կադապարը ճանապարհ է: Առածում էշը հանդես է գալիս իբրև համառ վարքագիծ, իսկ վարքագիծը՝ ինքնության արտապատկերում. ՎԱՐՔԱԳԻԾԸ ԷՇ Է: Ավելին, էշն իրեն է պատկանում, իր մի մասն է (նա իր էշն ա քշում), և այս համատեքստում էշը փոխանվանաբար ներկայացնում է համառ վարքագծի կադապարը, իսկ խորքային մակարդակում՝ հենց համառ մարդուն:

Անհատական կամքի ու հարկադրանքի անհնարինության հարաբերակցության լեզվաճանաչողական կադապարումը վերլուծենք հետևյալ առածներում, որոնցում ծարավը դիտարկվում է որպես ներքին պահանջմունքը բնորոշող փոխանունություն, ֆիզիոլոգիական հիմք, որի վրա կառուցվում է այլաբանական պատկերը:

On a beau mener le bœuf à l'eau, s'il n'a pas soif

On ne saurait faire boire un âne qui n'a pas soif

Քննության առարկա առածներում ցանկության բացակայության պայմաններում դիտարկվում է արտաքին ազդեցության ձախողման կադապարը: Տվյալ դեպքում շեշտադրվում է ծարավ հասկացությթը (*mener le bœuf à l'eau, s'il n'a pas soif, faire boire un âne qui n'a pas soif*): Ջուրը դիտարկվում է իբրև բարիք դիմացինին (ցուլ, էշ), և այս համատեքստում ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՋՈՒՐ Է, սակայն ծարավի բացակայությունը արգելակում է օգնությունը: Հատկանշական է, որ

վերոնշյալը առածների լեզվական մակարդակում առկայանում է երկու կաղապարի միջոցով: Մի դեպքում avoir beau faire զգոց կառույցի օգնությամբ շեշտադրվում է ջանքի գուր լինելը, ինչին հաջորդում է պայմանի հայեցակերպը ժխտման դիտանկյունից. առանցքը իրադարձությունն է (s'il n'a pas soif), մինչդեռ մյուս պարագայում qui հարաբերական դերանունը ուղղակիորեն բնորոշում է կենդանուն (qui n'a pas soif), իսկ գլխավոր նախադասությունն ընդգծում է իրականությունը փոխելու անկարելիությունը (on ne saurait faire boire un âne): Ուստի արդյունավետ փոխազդեցության նախապայմանը պատրաստակամությունն է, առանց որի ցանկացած գործողություն վերածվում է անպտուղ հարկադրանքի: Ճանաչողական-գործաբանական հարթությունում առածները հորդորում են ռեսուրսները սպառել միայն այն դեպքում, երբ դիմացինն ունի այդ ռեսուրսի «ծարավը»՝ ներքին պահանջմունքը:

Այժմ դիտարկենք ներքոնշյալ առածը ՊԱՏՏՎԱԿԸ ԽՈՉԸՆԴՈՏ Է հասկացութային փոխաբերության տեսանկյունից, իսկ լեզվաճանաչողական կաղապարի հիմքում կենդանու անատոմիական տիրույթն է.

Quand le bœuf ne veut pas entrer dans le bois, il dit que ses cornes sont trop longues

Առածը բնութագրում է այն մարդուն, որը ներքին կամքի բացակայությունը փորձում է ներկայացնել իբրև օբյեկտիվ, արտաքին անհնարինություն: Առածում ցույց հասկացույթի միջոցով կենդանու

անատումիայի օգնությամբ կառուցվում է ներքին ցանկության ճանաչողական կադապարումը: Մասնավորապես՝ կենդանին անտառ գնալու ցանկության բացակայությունը հիմնավորելու ժամանակ իբրև պատճառաբանություն ասում է (il dit), որ եղջյուրները երկար են: Անուղղակի խոսքը ներմուծում է թվացյալ պատճառաբանություն (il dit que ses cornes sont longues), սակայն գործողության իրական, ներակա պատճառն արտակա կերպով արտահայտված է առածի առաջին բաղադրիչ ասույթում (quand le bœuf ne veut pas entrer dans le bois): Ուստի առածը հորդորում է տարբերակել իրական խոչընդոտը կեղծ պատրվակից, չվստահել ծուլությունն ու դիմադրությունը քողարկող փաստարկներին, քանի որ խնդիրը պետք է փնտրել ոչ թե արտաքին պայմանների՝ «եղջյուրների երկարության», այլ ներքին մոտիվացիայի՝ «ցանկության բացակայության» մեջ:

Ներքոնշյալ առածը դիտարկել ենք ԳՈՐԾԸ ՄՆՆԴԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է հասկացութային փոխաբերության շրջանակում.

Quand on a avalé le bœuf, il ne faut pas s'arrêter à la queue

Առածը ենթադրում է ժամանակային սխեմա, գործողությունների հաջորդականություն, որի վերջնակետը գործողության փոքր հատվածի կատարումն է, ինչն էլ ամբողջացնում է ողջ ընթացքը: Այս դիտանկյունից ԳՈՐԾԸ ԿԵՆԴԱՆԻ Է հասկացութային փոխաբերությունը բացորոշում է մեծ-փոքր և մաս-ամբողջ հարաբերակցությունը, որի համատեքստում ցույր մեծի և ամբողջի ցուցիչն է, իսկ պոչը՝ փոքրի ու մասի: Ընթացքն առկայանում է avaler

բայի կիրառման միջոցով: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել փոքր բաղադրիչի էական նշանակությունը արդյունքի համատեքստում՝ պոչն է ամբողջացնում կաղապարը: Այս դիտանկյունից առածը քննադատում է կարևոր գործ կատարելու հարցում (ցուլին կուլ տալ) փոքր մասը կիսատ թողնելու (պոչին կանգ առնել) հանգամանքը՝ ընդգծելով հետևողականության կարևորությունը:

Եզրակացություն

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ առածներում կենդանական աշխարհի փոխաբերական պատկերումը մարդկային հատկանիշի վերհանման միջոց է: Քննության առարկա ֆրանսերեն ու հայերեն առածներում ՄԱՐԴԻԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՆ հասկացությային փոխաբերության պրիզմայով արժանավորության ու ապաշնորհության բնորոշումը ճանաչողական մակարդակում առկայանում է ԱՐԺԱՆԻՔԸ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔ Է, ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԸ ԲՆԱԶԴԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾ Է, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ Է և ԻՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԿԱՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ Է հասկացությային փոխաբերությունների միջոցով: Հատկանշական է, որ արժեքը դիտարկվում է ինչպես շուկայական, այնպես էլ բարոյական-արժեքաբանական դիտանկյունից: Ընդգծվում է նաև քանակ-որակ հարաբերակցության շրջանակում որակի նշանակությունը: Հասարակական «աղտոտումը» ենթադրում է բացասական անհատի վարակիչ ազդեցությունը կոլեկտիվ հանրույթի վրա: Երախտիք-արձագանք

շղթայի համատեքստում ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՁԱԳԱՆՔ Է, իսկ ԵՐԱԽՏԱՄՈՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՁԱԳԱՆՔ Է: Վերոնշյալի ճանաչողական մեկնակետը ԵՐԱԽՏԻՔԸ ՋԳԱՅՈՒԹՅՈՒՆ Է, ԵՐԱԽՏԻՔԸ ՄՆՈՒՆԴ Է, ԵՐԱԽՏԻՔԸ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ Է հասկացության փոխաբերություններն են: Ազահության քննադատության և զսպվածության հորդորի տիրույթում ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՄ Է: Ինչ վերաբերում է զգուշության լեզվաճանաչողությանը, ապա այն առկայանում է ՋԳՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ Է հասկացության փոխաբերության օգնությամբ: Դիտարկվում է նաև անհատական կամքի ու հարկադրանքի անհնարիանության կադապարումը, որի շրջանակում շեշտադրվում է արտաքին ազդեցության՝ բարիքի ձախողումը, և այս պարագայում ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՋՈՒՐ Է: ՀԱՄԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է հասկացության փոխաբերության օգնությամբ վերհանվում է համառ վարքագծի բնորոշումը: Առաձների բարոյախրատական իմաստի կառուցարկման ճանապարհին երկու լեզվամշակույթներում վերհանվել են կենդանիների փոխաբերական պատկերման նմանություններն ու տարբերությունները: Մասնավորապես՝ կենդանիներն ուղղորդում են հատկանիշների դրական ու բացասական հարանշանակության տիրույթ: Հարկ է ընդգծել, որ առաձներում հատկանիշի ընդգծումը պայմանավորում է կոնկրետ իրավիճակում վարքը, այդ իսկ պատճառով էլ հաճախ կենդանիները դիտարկվում են հակադիր հատկանիշների՝ դրական ու բացասական

հարանշանակության շրջանակում (Baghdasarián, 2014:206-207): Այսպիսով՝ աշխարհի բնական կերպը կենդանիների փոխաբերական պատկերի օգնությամբ լեզվաճանաչողական դաշտում կառուցում է առածային խոսույթի բարոյախրատական իմաստը՝ բնորոշելով մարդկային հատկանիշների բազմերանգ գունապնակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Алексеева, Т. Е. (2025). Зооморфные метафоры в английских пословицах: лексико-семантический анализ//Известия Саратовского университета. Новая серия. Серия: Филология. Журналистика. Т. 25, вып. 3, С. 266-273.
2. Babič, S. (2024). Animal Predators as a Characterising Element in Short Folklore Forms. Proverbium - Yearbook, vol. 41, no. 1, p. 1-21.
3. Baghdasarián, H. (2014). Lo universal y lo nacional en las paremias desde una perspectiva interlingual. Paremia, 23, p. 199-208.
4. Kövecses, Z. (2002). Metaphor: A Practical Introduction. New York: Oxford University Press, 320 p.
5. Lakoff, G. & Turner, M. (1989). More than Cool Reason: A Field Guide to Poetic Metaphor. Chicago: Chicago University Press, 237 p.
6. Lauhakangas, O. (2019). The Functions of Animal Metaphors in Proverbs. 12th In-terdisciplinary Colloquium on Proverbs, ACTAS ICP18 Proceedings, edited by Rui Soares, and Outi Lauhakangas. Tavira: AIP-IAP, p. 582-594.

7. Leguy, C. (2012). Des paradoxes de la référence animalière dans le discours proverbial. Michèle Cros, Julien Bondaz et Maxime Michaud (dir.), *L'animal cannibalisé. Festins d'Afrique*. Paris, Éditions des Archives contemporaines, p. 171-184.
- Mieder, W. (1993). *Howl Like a Wolf: Animal Proverbs*. Indiana: New England Press, p. 95.
8. Nuessel, F. (2010). Animals in Spanish Proverbial Language. *Proverbium, Year-book of International Proverb Scholarship*, vol. 27, p. 221–244.

Հեղվական նյութի աղբյուրներ

1. Ղանալանյան, Ա. (1960). Առածանի, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն:
2. Նազարյան, Ա. (1994). Ֆրանսիական առածներ և սասցվածքներ ռուսերեն և հայերեն թարգմանությամբ ու համարժեքներով, Եր., Հելիոս հրատարակչություն:
3. Dictionnaire de proverbes et dictons. (1984). Choisis et présentés par Florence Montreynaud, Agnès Pierron et François Suzzoni, Les usuels du Robert.
4. Sevilla Muñoz, J.; Zurdo Ruiz-Ayúcar, M. T. [dir.] (2009). *Refranero multilingüe*. Madrid. Instituto Cervantes (Centro Virtual Cervantes). URL: <http://cvc.cervantes.es/lengua/refranero/>